

02. 07. 2020 թ.

ք. Գյումրի

ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ

**ՈՐՈՇՈՒՄ Թիվ 522**

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄՈՒՇԻ ԲԱԺՆԻ  
ԹԻՎ 122 ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ես՝ ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ՝ Սասուն Ժորայի Աբաղյանս, վերանայելով ՀՀ ոստիկանության Մուշի բաժնի պետի կողմից **21.04. 2020 թ.** կայացված թիվ **122** որոշումը, պարզեցի, որ.

Շիրակի մարզ քաղաք Գյումրի, Մուշ 2 թաղամաս, 4-3Բ շենք, 56 բնակարանի բնակիչ՝ Գոռ Արտավազի Մանուկյանը

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության: Վերջինիս նկատմամբ նշանակվել է տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2020 թվականի մայիսի 19-ի թիվ ՀՕ-265-Ն օրենքի 2-րդ հոդվածը և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 67-րդ հոդվածով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Վերանայել Գոռ Արտավազի Մանուկյանի նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 10-րդ մասով կիրառված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով նշանակված տուգանքը, փոխարենը կիրառելով վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված տույժը՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով տուգանքը (10.000 ՀՀ դրամ):

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է գանգափարկվել (բողոքարկվել) սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված կարգով վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգափար կարող է փրվել որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսու օրվա ընթացքում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ,  
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ՝  
Կ.Տ.



*[Handwritten signature in blue ink]*

Ս. Ժ. ԱԲԱԴՅԱՆ